

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

N «ԴԴ-ԳՀԾՁԲ-26/01-1»

ք. Երևան

« 31 » « 03 » 2026թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Միքայելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:





2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ԼԳxԾxԶ, որտեղ՝



ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

¹ Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:



7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից:

Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի գիշման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 36 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը ստանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ -

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Ն. Գալստյան



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,

Շիրազի փ.30, 34

ՀՎՀՀ՝ 01269447

Հ/Հ՝ 1570023314500100

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Կ. Միքայելյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ

$\langle\langle \eta \eta \rangle\rangle$

Ծառայության										մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	մակբեռնադրոհման համար	մատուցման միավոր առավելագույն և փոքրագույնը (ՀՀ դրամ)	մատուցման համար սահմանված առավելագույն և փոքրագույնը (ՀՀ դրամ)	ընտրված մասնակցի առաջարկված հանրագումարային գինը (ՀՀ դրամ)	պահանջարկի առավելագույն և փոքրագույնը (ՀՀ դրամ)	չափման միավորը	քանակը	հասցեն	Ժամկետը
1	50111130/501	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Nissan X-Trail 2.5/	Համաձայն կից ներկայացված ցանկ 1-ի	14 667 000	6 439 500	600 000	դրամ	1	Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 22-ը:	Ժամկետը
2	50111130/502	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /Toyota Camry 2.5/	Համաձայն կից ներկայացված ցանկ 2-ի	14 870 300	6 870 950	1 000 000	դրամ	1	Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 22-ը:	Ժամկետը
4	50111130/504	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ /TOYOTA LC 150 4,0/	Համաձայն կից ներկայացված ցանկ 4-ի	1 360 000	873 000	1 200 000	դրամ	1	Ծառայությունները մատուցվում են Երևան քաղաքում:	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 22-ը:	Ժամկետը

Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:
Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագիրը (համաձայնագրերը),
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կոյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ -

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն



ԿԱՏԱՐՈՂ

«ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ


Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,

Շիրազի փ.30, 34

ՀՎՀՀ՝ 01269447

Հ/Հ՝ 1570023314500100

«ԱՄԵՐԻԿԱԲԱՆԿ» ՓԲԸ



ՑԱՆԿ 1

Nissan X-Trail 2.5l, 2016թ.

</>	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Միավոր առավելագույն գինը (<< դրամ)
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	
1	Բռնկման համակարգի ստուգում	3 000
2	Սառեցման համակարգի ստուգում	3 000
3	Յուղման համակարգի ստուգում	3 000
4	Արտաքին համակարգի ստուգում	3 000
5	Կցորդման համակարգի ստուգում	3 000
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	3 000
7	Կարգանային փոխանցման աշխատանքի ստուգում	3 000
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3 000
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3 000
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3 000
11	ABS համակարգի ստուգում	3 000
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3 000
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3 000
14	Թափքի վիճակի ստուգում	3 000
15	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3 000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը	
16	Շարժիչի հանում տեղադրում	70 000
17	Շարժիչի վերանորոգում	150 000
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	10 000
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	12 000
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	50 000
21	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	12 000
22	Շարժիչի գլխիկի վերանորոգում	50 000
23	Փականի խցուկի փոխարինում	25 000
24	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	15 000
25	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	10 000
26	Հրիչի փոխարինում	25 000
27	Ատամնավոր փոկի փոխարինում	
28	Փոկանիվի փոխարինում	
29	Ձգող հղովակի փոխարինում	15 000
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15 000
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	50 000
32	Մխոցային օղակների փոխարինում	85 000
33	Թափանիվի հանում և տեղադրում	35 000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
35	Յուղի պոմպի փոխարինում	35 000
36	Շարժիչի յուղի փոխարինում	1 000
37	Ղեկավարման բլոկի վերանորոգում	75 000
38	Բռնկման կարգավորում	3 000
39	CO կարգավորում	3 000
40	Օդի զտիչի փոխարինում	2 000
41	Սրահի զտիչի փոխարինում	2 000
42	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	8 000
43	Ինժեկտորի ֆորսունկայի մաքրում	16 000
44	Վառելիքի զտիչի փոխարինում	15 000
45	Վառելիքի զտիչի փոխարինում	15 000
46	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	25 000
	3. Սառեցման և արտաձման համակարգ	
47	Հովհարի փոկի հանում և տեղադրում	

48	Հովհարի հանում և տեղադրում	15 000
49	Ռադիատորի հանում և տեղադրում	10 000
50	Ռադիատորի վերանորոգում	55 000
51	Թերմոստատի փոխարինում	20 000
52	Ջրի պոմպի փոխարինում	45 000
53	Ընդարձակող բաքի փոխարինում	5 000
54	Խլարարի հանում և տեղադրում	5 000
55	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	5 000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
56	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	
57	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	
58	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	
59	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	
60	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	
61	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	250 000
62	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	300 000
63	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	60 000
64	ԱՓՏ-ի վերանորոգում	300 000
65	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	15 000
5. Առջևի և հետևի կամրջակներ		
66	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	60 000
67	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	120 000
68	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	100 000
69	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում	25 000
70	Կիսասոնու առանցքակալի փոխարինում	30 000
6. Կախոց		
71	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	60 000
72	Տրավերսի հանում և տեղադրում	30 000
73	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	15 000
74	Անվակունդի առանցքակալի փոխարինում	15 000
75	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	15 000
76	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	10 000
77	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	10 000
78	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	15 000
79	Հսպանակի հանում և տեղադրում	5 000
80	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	10 000
81	Ներքևի լծակի հանում և տեղադրում	10 000
82	Ներքևի լծակի վռանների փոխարինում	8 000
83	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	8 000
84	Միջին ձգանի հանում և տեղադրում	
85	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	
86	Վերևի լծակի հանում և տեղադրում	
87	Վերևի լծակի վռանների փոխարինում	
88	Գնդե հողակապերի փոխարինում	
89	Ծայրականների հանում և տեղադրում	13 000
90	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	8 000
91	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	12 000
92	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	10 000
93	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	10 000
94	Հետևի զսպանակի փոխարինում	8 000
95	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	8 000
96	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	10 000
97	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	5 000
98	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	5 000
99	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	8 000
100	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	8 000
101	Անվաքացքի կարգավորում	10 000
102	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	6 000
103	7. Ղեկային մեխանիզմ	3 000
103	Ղեկային կալունի հանում և տեղադրում	15 000
104	Ղեկային կալունի վերանորոգում	120 000



105	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	10 000
106	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	15 000
107	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	20 000
108	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	
109	Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում	15 000
110	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	45 000
111	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	65 000
	8. Արգելակային համակարգ	
112	Գլխ.գլանի հանում և տեղադրում	15 000
113	Գլխ. գլանի վերանորոգում	10 000
114	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	15 000
115	Բանվ. գլանի հանում և տեղադրում	
116	Բանվ. գլանի վերանորոգում	
117	Արգելակային համակարգի օդահանում	1 000
118	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3 000
119	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3 000
120	Առջևի սուպպորտի վերանորոգում	10 000
121	Հետևի սուպպորտի վերանորոգում	10 000
122	Արգելակային փողրակի փոխարինում	5 000
123	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	6 000
124	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	6 000
125	Հետևի կոճղակների փոխարինում	8 000
126	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	6 000
127	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	6 000
128	Արգելակային սկավառակի հղկում	8 000
129	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	3 000
130	ABS-ի հանում և տեղադրում	10 000
131	ABS-ի վերանորոգում	35 000
132	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	15 000
133	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	15 000
	9. Էլեկտրասարքավորում	
134	Էլեկտրասարքավորման վերանորոգում	35 000
135	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	15 000
136	Գեներատորի հանում և տեղադրում	12 000
137	Գեներատորի վերանորոգում	12 000
138	Մեկնարկիչի հանում և տեղադրում	12 000
139	Մեկնարկիչի վերանորոգում	12 000
140	Առջևի լապտերի հանում և տեղադրում	10 000
141	Հետևի լապտերի հանում և տեղադրում	10 000
142	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	15 000
143	Վազքաչափի հանում և տեղադրում	15 000
144	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	
145	Սարքերի պանելի հանում և տեղադրում	15 000
146	Արագաչափի հանում և տեղադրում	10 000
147	Ազդանշանի հանում և տեղադրում	10 000
148	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	12 000
149	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	20 000
150	Ազդանշանային համակարգի տեղադրում	20 000
151	Մագնիստոլային տեղադրում	10 000
152	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10 000
153	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	25 000
154	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	25 000
155	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	25 000
156	Էլեկտրական տվիչների փոխարինում	15 000
157	Էլեկտրական անջատիչների փոխարինում	25 000
158	Վառոցքի կոճի փոխարինում	15 000
159	Վառոցքի մոմի փոխարինում	15 000
160	Կոնդիցիոների լիցքավորում	30 000
161	Կոնդիցիոների վերանորոգում	50 000
	10. Այլ ծառայություններ	
162	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը 1 քառ.դմ-ի համար	10 000



163	Անիվի հանում և տեղադրում	2 000
164	Անվադողի վերանորոգում	2 000
165	Անիվի բալանսավորում	2 000
166	Անիվի վալց	12 000
167	ՇՕ-գողման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	5 000
168	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	5 000
169	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար	5 000
170	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	1 500
171	Սրահի քիմմաքրում	30 000
172	Դիմապակու հանում և տեղադրում	35 000
173	ռետինե գորգերի հավաքածու	30 000
174	Ապակիների թաղանթապատում	50 000
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1. Շարժիչ	
1	Շարժիչի բլոկ	1 250 000
2	Շարժիչի գլխիկ	980 000
3	Բարձիկ	45 000
4	Շարժիչի գլխակի միջադիր	30 000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	112 000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	65 000
7	Շարժիչի փական դուրս մղող	12 000
8	Շարժիչի փական ներս մղող	12 000
9	Շարժիչի փականի խցուկ	2 000
10	Ծնկաձև լիսեռ	465 000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	20 000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	25 000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	45 000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	45 000
15	Հենակային տափողակ	10 000
16	Մխոց	45 000
17	Մխոցային օղակներ	85 000
18	Ատամնանիվ	
19	Ատամնավոր փոկ	
20	Շղթա	95 000
21	Հիդրոձգան	35 000
22	Հրիչ	25 000
23	Հրիդրոհրիչ	25 000
24	Բամշակ	30 000
25	Հանգստարար	30 000
26	Թափանիվ	112 000
27	Թափանիվի պսակ	25 000
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	20 000
29	Շկիվ	35 000
30	Շարժաթև	65 000
31	Կարտերի միջադիր	10 000
32	Միջադիր	25 000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղի պոմպ	85 000
34	Յուղի պոմպի շարժաթևեր	
35	Յուղի ռադիատոր	
36	Յուղի փողրակ	
37	Յուղի ծորակ	
38	Շարժիչի յուղ	3 000
39	Շարժիչի յուղի զտիչ	1 000
40	Վառոցքի մոմ	7 500
41	Վառոցքի կոճ	35 000
42	Բենզոլբաք	115 000
43	Ինժեկտորի ֆորսունկա	35 000
44	Վառելանյութի մղիչ էլեկտրական	45 000
45	Վառելանյութի զտիչ	30 000

46	Վառելանյութի զտիչի նուրբ մաքրման	10 000
47	Վառելանյութի փողրակ	5 000
48	Աքսելերատորի ճոպան	15 000
49	Օդի զտիչ	12 000
50	Ջերմաստիճանային տվիչ	12 000
51	Յուղի տվիչ	25 000
52	Բաշխիչ լիսեռի տվիչ	25 000
53	Օդի ծախսի տվիչ	30 000
54	Արագաչափի տվիչ	30 000
55	Հովհարի տվիչ	15 000
56	Ջրի տվիչ	20 000
57	Բենզոլքաքի տվիչ	65 000
58	Մարման ընթացքի կարգավորիչ	35 000
59	Մարման ընթացքի տվիչ	25 000
60	Ղեկավարման համակարգիչ	250 000
61	Պարապ ընթացքի տվիչ	45 000
62	Դրոսելային փականի տվիչ	25 000
63	Թթվածնի տվիչ	35 000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
64	Հովհարի փոկ	
65	Էլեկտրական հովհար	65 000
66	Ռադիատոր	112 000
67	Ընդարձակող բաք	35 000
68	Ռադիատորի փողրակ	5 000
69	Թերմոստատ	35 000
70	Ջրի պոմպի թևակ	25 000
71	Ջրի պոմպի առանցքակալ	10 000
72	Ջրի պոմպի թևակ	25 000
73	Սառեցման հեղուկ 1 լիտր	2 000
74	Ջրի պոմպի սռնանիվ	20 000
75	Հոլովակ	15 000
76	Փոկ	20 000
77	Փոկ կոնդիցիոների	
78	Սրահի զտիչ	10 000
79	Ծորակ	25 000
80	Խլարարի ներդիր	5 000
81	Խլարարի կախոց	5 000
82	Կրոնշտեյն	3 000
83	Անուր (Խամուս)	3 000
84	Խլարար	45 000
85	Ռեզոնատոր	750 000
86	Վառարանի ռադիատոր	65 000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
87	Կցորդման բանվորական գլան	
88	Կցորդման գլխավոր գլան	
89	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	
90	Կցորդման տանող սկավառակ	
91	Կցորդման տարվող սկավառակ	
92	Կցորդման առանցքակալ	
93	Կցորդման փողրակ	
94	Համաժամիչ	
95	Մուֆտ	
96	ԱՓՏ-ի զտիչ	25 000
97	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	350 000
98	ԱՓՏ-ի սղենոիդ	65 000
99	ԱՓՏ յուղ, 1 լիտր	11 000
100	Հերմետիկ	6 000
	5. Առջևի կամ հետևի կամրջակներ	
101	Ռեդուկտոր	
102	Գլխավոր փոխանցման առամանիվների կոմպլեկտ	
103	Դիֆֆերենցիալ	

104	Դիֆֆերենցիալի սատելլիտ	
105	Տանող ատամնանիվի խցուկ	
106	Տանող ատամնանիվի առանցքակալ	
107	Դիֆֆերենցիալի առանցքակալ	
108	Կիսաստնի	
109	Կիսաստնու առանցքակալ	
110	Կիսաստնու միջադիր	
111	Կիսաստնու խցուկ	
112	Կարգավորիչ տափողակ	
	6. Կախոց	
113	Տրավերս	125 000
114	Կրոնշտեյն	15 000
115	Ձախ կամ աջ հողակապ	55 000
116	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	15 000
117	Անվակունդ	45 000
118	Անվակունդի խցուկ	10 000
119	Անվակունդի ներքին առանցքակալ	35 000
120	Անվակունդի արտաքին առանցքակալ	35 000
121	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	35 000
122	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	35 000
123	Ձախ կամ աջ հեղակապի խցուկ	5 000
124	Հարվածամեղմիչի թասակ	35 000
125	Ջսպանակ	30 000
126	Առջևի հարվածամեղմիչ	80 000
127	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10 000
128	Հարվածամեղմիչի վռան	10 000
129	Ներքևի լծակ	55 000
130	Ներքևի լծակի վռան	20 000
131	Վերևի լծակ	
132	Վերևի լծակի վռան	
133	Գնդե հողակապ	22 000
134	Առջևի կայունարար	45 000
135	Առջևի կայունարարի վռան	12 000
136	Առջևի կայունարարի կանգնակ	22 000
137	Առջևի կայունարարի առջևի վռան	8 000
138	Հետևի կայունարարի վռան	8 000
139	Հետևի կայունարարի կանգնակ	20 000
140	Հետևի զսպանակ	45 000
141	Հետևի ցնցամեղմիչ	65 000
142	Հետևի մետաղաձող (շտանգա)	25 000
143	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	12 000
144	Հետևի անկյունագծային լծակ	30 000
145	Անկյունագծային լծակի վռան	12 000
146	Ջսպակի միջադիր	
147	Ջսպակի բռնիչ	
148	Աջ կամ ձախ ձգան	15 000
149	Ծայրակալ	12 000
150	Ձգան մեջտեղի	
151	Անվահեծ	35 000
	7. Ղեկային մեխանիզմ	
152	Ղեկային կալուն	350 000
153	Ղեկային կալունի առանցքակալ	25 000
154	Ղեկային կալունի խաչուկ	25 000
155	Հիդրոուժեղարար	165 000
156	Հիդրոուժեղարարի փոկ	17 000
157	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	35 000
158	Հիդրոուժեղարարի պոմպ	125 000
159	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	15 000
160	Ղեկային ձող	10 000
161	Ղեկային ձողի ծայրակալ	15 000
162	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	6 000

	8. Արգելակային համակարգ	
163	Գլխ. գլան	45 000
164	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	20 000
165	Վակումային ուժեղարար	60 000
166	Բանվ. գլան	
167	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	
168	Արգելակային փողրակ	12 000
169	Սուպպորտի ուղղորդիչ	15 000
170	Սուպպորտի մոնժետ	10 000
171	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	35 000
172	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30 000
173	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	35 000
174	Առջևի արգելակային սկավառակ	55 000
175	Հետևի արգելակային սկավառակ	55 000
176	Ձեռքի արգելակային ճոպան	25 000
177	ABS-ի տվիչ	25 000
178	Արգելակային հեղուկ, DOT-3 - 500գրամ	6 000
179	Արգելակային հեղուկ, DOT-4 - 500գրամ	3 000
180	Ձեռքի արգելակման բռնակ	25 000
	9. Էլեկտրասարքավորում	
181	Գեներատոր	150 000
182	Գեներատորի դիողային կամրջակ	30 000
183	Գեներատորի ռեկե	30 000
184	Գեներատորի առանցքակալ	12 000
185	Գեներատորի խարիսխ	30 000
186	Գեներատորի խարիսխի հետևի պլասմաս	5 000
187	Գեներատորի առջևի իրան	15 000
188	Գեներատորի հետևի իրան	25 000
189	Գեներատորի փաթույթ	35 000
190	Գեներատորի փոկանիվ	35 000
191	Գեներատորի կալունակ	15 000
192	Գեներատորի կոլեկտոր	15 000
193	Մեկնարկիչ	145 000
194	Մեկնարկիչի ռեկե	25 000
195	Մեկնարկիչի ածուխ	25 000
196	Բենդեքս	35 000
197	Մեկնարկիչի կցորդիչ (ավտոմատ)	35 000
198	Առջևի լապտեր	120 000
199	Առջևի թարթիչ	25 000
200	Հետևի լապտեր	100 000
201	Հետևի թարթիչ	15 000
202	Արգելակային լապտեր	100 000
203	Հակամշուշային լապտեր	35 000
204	խցիկի լապտեր	25 000
205	խցիկի լապտերի լամպ	5 000
206	Լամպ (քսենոն բլոկով)	35 000
207	Առջևի լապտերի լամպ	12 000
208	Հետևի լապտերի լամպ	3 000
209	Առջևի թարթիչի լապտերի լամպ	3 000
210	Հետևի թարթիչի լապտերի լամպ	3 000
211	Հակամշուշային լապտերի լամպ	11 000
212	Արգելակային լապտերի լամպ	3 000
213	Էլեկտրական անջատիչ	25 000
214	Էլեկտրական տվիչ	15 000
215	Էլեկտրական չափիչ սարք	35 000
216	Բռնկման կողպեք	45 000
217	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	125 000
218	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	100 000
219	Վառոցքային լարերի խուրց	25 000
220	Վառոցքի մոմի ծայրակալ	6 000
221	Վազբաշափ	45 000

222	Վազքաչափի ճուղան	
223	Արագաչափ	45 000
224	Ազդանշան	20 000
225	Ապակեվազիչ	45 000
226	Ապակեվազիչի շարժիչ	40 000
227	Ապակեմաքրիչ	5 000
228	Ապակեմաքրիչի խոզանակներ	8 000
229	Դռների կենտրոնական փական	40 000
230	Ազդանշանային համակարգ	30 000
231	Մարտկոց	60 000
232	Էլեկտրամաքրծիչ	45 000
233	Էլեկտրամաքրծիչի շարժիչ	40 000
234	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	8 000
235	Դիմապակի	60 000
236	Դիմապակու ռեզին	15 000
Առավելագույն միավոր գների հանրագումարը		14 667 000

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Դադրական դեպարտամենտ
 Հասցե՝ ք. Երևան, Կոռյունի 15/1
 ՀՎՀՀ՝ 02583241
 Հ/Հ՝ -
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Ղեկավար՝ Ն. Գալստյան
 (ստորագրություն)


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ
 Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ թաղամաս,
 Ծիրագի փ.30, 34
 ՀՎՀՀ՝ 01269447
 Հ/Հ՝ 1570023314500100
 «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
 Տնօրեն՝ Միքայելյան
 (ստորագրություն)


ՑԱՆԿ 2

Toyota Camry 2.5i, 2011թ.

Հ/Հ	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Միավոր առավելագույն գինը (ՀՀ դրամ)
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	
1	Բռնկման համակարգի ստուգում	3000
2	Սառեցման համակարգի ստուգում	3000
3	Յուղման համակարգի ստուգում	3000
4	Արտաձման համակարգի ստուգում	3000
5	Կցորդման համակարգի ստուգում	3000
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	3000
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	3000
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	3000
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	3000
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3000
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3000
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	3000
13	ABS համակարգի ստուգում	3000
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	3000
16	Թափքի վիճակի ստուգում	3000
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	3000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	
	1. Շարժիչ	
18	Շարժիչի հանում և տեղադրում	70000
19	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	320000
20	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	12000
21	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	25000
22	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	65000
23	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	180000
24	Շարժիչի գլխիկի փականի փոխարինում հղկումով և խտաբուկերով	5000
25	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	5000
26	Շարժիչի փականի զսպանակի փոխարինում	3000
27	Փականի խցուկի փոխարինում	1500
28	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում	5000
29	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	40000
30	Ծնկաձև լիսեռի հղկում	45000
31	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	30000
32	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	30000
33	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	10000
34	Ծնկաձև լիսեռի ուղղում	25000
35	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15000
36	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	60000
37	Շարժիչի բլոկի փոխարինում	140000
38	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	20000
